

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

բաժնեմասի առուվաճառքի պայմանագիր

(Կազմված է 20-- թվականի -----ի ---ին և բաղկացած է 2 (երկու) էջից)

ք. -----

«----» -----ի 20-- թ.

«-----» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցման համարը՝ -----, գրանցման ամսաթիվը՝ ----- թ., ՀՎՀՀ-ն՝ -----) (այսուհետ՝ Ընկերություն) մասնակից -----ը (----- քաղաքացի, անձնագիր՝ -----, տրված՝ ----- թ., --- -ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշը՝ -----, հաշվառման հասցեն՝ -----) (այսուհետ՝ Վաճառող) մի կողմից և ----- քաղաքացի -----ը (անձնագիր՝ -----, տրված՝ ----- թ., --- -ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշը՝ -----, հաշվառման հասցեն՝ -----) (այսուհետ՝ Գնորդ) մյուս կողմից կնքեցին բաժնեմասի առուվաճառքի մասին հետևյալ պայմանագիրը:

1. Վաճառողն Ընկերության կանոնադրական կապիտալում սեփականության իրավունքով իրեն պատկանող --- % բաժնեմասը վաճառում է Գնորդին:
2. Բաժնեմասի վաճառքի գինը կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանվում է ----- (-----) ՀՀ դրամ:
3. Բաժնեմասը Վաճառողին է պատկանում իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի համաձայն:
4. Վերը նշված բաժնեմասը վեճի առարկա չէ, գրավի, կալանքի և արգելանքի տակ չի գտնվում:
5. Գնորդը դառնում է Ընկերության կանոնադրական կապիտալում --- % բաժնեմասի սեփականատեր՝ սույն պայմանագրի ստորագրման պահից: Գնորդին են փոխանցվում Ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքներն ու պարտականությունները:
6. Վեճերը և տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ սույն պայմանագրի կատարման ընթացքում հնարավորության սահմաններում լուծվում են բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում՝ դատական կարգով: Վեճերի լուծման կարգը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և պայմանագրով ծագած իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

8. Բաժնեմասի առուվաճառքի հետ կապված ծախսերն իր վրա է վերցնում Գնորդը: Գնորդին են հանձնարարվում նաև սույն պայմանագրից բխող փոփոխությունների պետական գրանցման հետ կապված գործառնությունների իրականացումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

9. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, չորս օրինակից: Բոլոր օրինակներն ունեն միատեսակ իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրն ունի սույն պայմանագրի մեկական օրինակ, մեկ օրինակը հանձնվում է Ընկերությանը, մեկը՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Կողմերի ստորագրությունները

Վաճառող՝

Գնորդ՝

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

(ստորագրություն) (անուն, ազգանուն)